ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-124/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի 12.12.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

Ա/Ձ Վահրամ Ապրեսյանը (այսուհետ նաև՝ Ա/Ձ) 12.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 29-ի թիվ 3 որոշման համաձայն՝ Ա/Ձ-ի Վահրամ Ապրեսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը և հայտի ապահովումը, էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել են լիազորված ստորագրող Ստեփան Ադյանի կողմից, սակայն հայտում բացակայում է

Ա/Ձ-ի կողմից վերջինիս տրված լիազորագիրը, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրում չի նշվել ամսաթիվը, ինչի պայմաններում Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

Ա/Ձ-ն նշել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը մերժվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:

Ա/Ձ-ն նաև հայտնել է, որ համաձայն չէ «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հետ, քանի որ հայտում նշված է եղել Ստեփան Ադյանի լիազոր անձ հանդիսանալու փաստը, իսկ արձանագրության մեջ ևս հանձնաժողովի կողմից հաստատվում է, որ Ստեփան Ադյանը լիազորված ստորագրող է: Բացի այդ Ստեփան Ադյանը տիրապետել է www.armeps.am համակարգում Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի մուտքային տվյալներին, ինչը նույնպես ըստ Ա/Ձ-ի հաստատում է, որ վերջինս հանդիսացել է լիազոր անձ:

Ա/Ձ-ն տեղեկացրել է, որ լիազորագրի բացակայությունը թյուրիմացության հետևանք է, ինչը չի կարող համարվել ներկայացված գնային առաջարկի կամ հայտի ապահովման հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ա/Ձ-ն, մեջբերելով Կարգի 45-րդ կետը, գտնում է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է հնարավորություն ընձեռներ Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան շտկումներ:

Ըստ Ա/Ձ-ի, գնահատող հանձնաժողովի այն հիմնավորումը, որ տուժանքի մասին համաձայնագրում չի նշվել ամսաթիվը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ էլեկտրոնային ստորագրության վրա հստակ երևում է փաստաթղթի հաստատման ամսաթիվը, այն է՝ 29.11.2016թ., իսկ փաստաթուղթը համարվում է վավեր նրա հաստատման փահից, հետևաբար, ըստ Ա/Ձ-ի որպես փաստաթղթի ամսաթիվ պետք է դիտարկել 29.11.2016թ.:

Ա/Ձ-ն խնդրել է Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքներով «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին առաջին և երկրորդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից չճանաչել և նույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 7 արձանագրությամբ կայացված՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը կասեցնել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 26.12.2016թ. գրությամբ Ընկերությունը ***խնդրել է առանց քննության թողնել 12.12.2016թ. ներկայացված բողոքը:***

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ի պատասխան Կենտրոնի 13.12.2016թ. թիվ 01/04.2/4559-16 գրության, 06.12.2016թ. թիվ 02/61-28796 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը և հայտի ապահովումը, էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել են լիազորված ստորագրող Ստեփան Ադյանի կողմից, սակայն հայտում բացակայում է Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի կողմից վերջինիս տրված լիազորագիրը՝ հրավերով սահմանված փաստաթղթերը ստորագրելու իրավասության վերաբերյալ, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրում չի նշվել ամսաթիվը:

Վերը նշվածի համաձայն՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է Ա/Ձ Վահրամ Ապրեսյան հայտը:

Պատվիրատուն նաև հայտնել է, որ Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի այն պատճառաբանությունները, որ իր կողմից Ստեփան Ադյանին տրված լիազորագրի բացակայությունը թյուրիմացության հետևանք է, ինչը չի կարող համարվել ներկայացված գնային առաջարկի կամ հայտի ապահովման հրավերի պահանջների անհամապատասխանություն, անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Պատվիրատուն, հիմք ընդունելով վերը նշված իրավանորմը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ա/Ձ Վահրամ Ապրեսյանը ինքն է ընդունում այն փաստը, որ հայտում բացակայում է իր կողմից տրված համապատասխան լիազորագիրը, փաստացի չապահովելով իր անունից փաստաթղթերը ստորագրելու իրավասությունը, գտնում է, որ

գնահատող հանձնաժողովի որոշումն իրավաչափ է և վերջինիս կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել հրավերի պայմաններին և այդ իսկ հիմքով գնահատող հանձնաժողովը չի կիրառել Կարգի 45-րդ կետի դրույթները:

3. ԳԲԽ-124/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Ա/Ձ Վահրամ Ապրեսյանը 12.12.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել բողոք, իսկ 26.12.2016թ. գրությամբ խնդրել է առանց քննության թողնել վերը նշված բողոքը:

Հիմք ընդունելով Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի 12.12.2016թ. բողոքը առանք քննության թողնելու մասին 26.12.2016թ. գրությունը՝ առաջարկում ենք Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքներով «Նիկոլ Դուման» Ա/Կ-ին առաջին և երկրորդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից չճանաչելու պահանջի մասին Ա/Ձ Վահրամ Ապրեսյանի կողմից 12.12.2016թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-124/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան